

Հարգելի Ուսանողներ,

Ցանկանում ենք տեղեկացնել ՎիվաՍել-ՄՏՄ-ում «Վիվա-Սթարթ» ուսուցողական ծրագրի մասին, որի մեկնարկը կտրվի ս.թ. հուլիսի 1-ին և կավարտվի ս.թ. օգոստոսի 30-ին: Ծրագրի նպատակն է զարգացնել ուսանողների վաճառքի և սպասարկման հմտությունները: Ծրագրի ընթացքում հնարավորություն կունենաք կիրառել Ձեր գիտելիքները վաճառքի, միջանձնային հաղորդակցման ուղղությամբ, ինչպես նաև ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ հեռահաղորդակցության, հաճախորդների սպասարկման և ժամանակակից տեխնոլոգիաների ոլորտներում:

Ծրագրի սկզբում անկազմվելու է 2 օր դասընթաց, այնուհետև առնվազն կես օրվա ներգրավվածությամբ պրակտիկա անցնելու հնարավորություն Երևան քաղաքի և ՀՀ որոշ մարզերի ՎիվաՍել-ՄՏՄ-ի սպասարկման կենտրոններում: Ծրագրի ավարտին կտրվեն հավաստագրեր և բարձր կատարողական ցուցաբերած ուսանողները կընդգրկվեն ընկերության տվյալների բազայում՝ հետագայում թափուր պաշտոններ զբաղեցնելու նպատակով:

Ծրագրի մասնակից դառնալու համար անհրաժեշտ է ունենալ հետևյալ որակավորումները.

1. Բարձր առաջադիմություն և օտար լեզուների իմացություն,
2. Հաղորդակցման գերազանց հմտություններ,
3. Դրական մոտեցում/էնտուզիազմ,
4. Տեղեկատվությունն արագ ընկալելու և ներկայացնելու կարողություն,
5. Քաղաքավարության կանոնների/էթիկայի նորմերի պահպանում:

Ծրագրում ընդգրկվելու համար անհրաժեշտ է ներկայացնել CV/ինքնակենսագրական և մոտիվացիոն գրություն, որի մեջ պետք է նշվի, թե ինչու եք ցանկանում մասնակցել տվյալ ծրագրին, ինչ սպասելիքներ ունեք ծրագրից և ինչու պետք է Ձեզ ընտրենք: Պարտադիր է նշել նաև Ձեր բնակության վայրը և նախընտրած մարզի 2-3 համայնք, որտեղ կարող եք մասնակցել մեր ծրագրին:

Ըստ վերոհիշյալ պահանջների, իրականացվելու է ուսանողների ընտրության գործընթաց: Ծրագրին կարող են դիմել միայն ԲՈՒՀ-ի 3-րդ և մագիստրատուրայի 1-ին և 2-րդ կուրսում սովորող ուսանողները:

Խնդրում ենք մինչև ս.թ. մայիսի 31-ը Ձեր դիմումներն ուղարկել [VivaStart@mts.am](mailto:VivaStart@mts.am) էլեկտրոնային հասցեին՝ կից ներկայացնելով պահանջվող փաստաթղթերը: Դուք կարող եք դիմել նաև [www.mts.am](http://www.mts.am) և [www.staff.am](http://www.staff.am) կայքերով:

Շնորհակալություն հետաքրքրության համար: